ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.08.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/109

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Մասնակցությամբ՝
Մասնակից՝ «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ կ. Ադամյանի, Մ. Տերյանի

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 02.07.2019թ. թիվ 26/26-1/11052-2019 գրությամբ «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 24.06.2019թ. թիվ 1/18-2/32564-2019 գրության հիման վրա, 02.07.2019թ. «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 24.06.2019թ. թիվ 1/18-2/32564-2019 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև ՀՀ ՊԵԿ կարիքների համար տպագրական աշխատանքների կատարման համար 2019 թվականի ապրիլի 16-ին կնքված թիվ ՀՀՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-19/8-1 ծածկագրով «Պետության կարիքների համար տպագրական աշխատանքների կատարման» պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագրի) թիվ 1 հավելվածով նախատեսված ժամկետում և Պայմանագրի 1.1 կետով սահմանված՝ «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ -ն պարտավոր էր մինչև 2019 թվականի մայիսի 11-ը կատարեր ստանձնած պարտավորությունները, սակայն մինչև նշված ժամկետը չի կատարել հավելված 1-ով սահմանված աշխատանքները: «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ի կողմից սույն թվականի հունիսի 04-ին և հունիսի 05-ին մատակարարվել է 1-7-րդ չափաբաժինները: ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 2019 թվականի մայիսի 29-ի թիվ 1/18-1/24367-2019 գրությամբ նախազգուշացրել էր «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ին, որպեսզի Պայմանագրով նախատեսված պարտավորությունները կատարվեն, այլապես միակողմանի կլուծվի «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ի հետ կնքված Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ Պայմանագրով սահմանված ժամկետում վերը նշված աշխատանքները Ձեր կազմակերպության կողմից չեն կատարվել և խախտվել են Պայմանագրի էական պայմանները: Հետևաբար, Պայամանգրի 2.1.3 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն ստիպված է միակողմանի մասնակի լուծել Պայմանագիրը 1 359 500 ՀՀ դրամ չկատարված աշխատանքների մասով:

Հիմք ընդունելով՝ Պայմանագրի 2.1.3 ենթակետի «ա» և «բ» պարբերությունների պահանջները՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 2019 թվականի հունիսի 11-ից

միակողմանի մասնակի լուծում է 2019 թվականի ապրիլի 16-ին կնքված ՀՀՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-19/8-1 ծածկագրով պայմանագիրը:»:

Հիմք ընդունելով կարգի 45-րդ կետի պահանջները՝ «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար ներկայացրել են անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 04.02.2019թ. գրությամբ դիմել է «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.07.2019թ. թիվ 26/26-1/11052-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, Բողոքներ քննող անձին հայտնել է հետևյալը.

««Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ նկատառումները.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կազմակերպվել է «ՀՀՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-19/8-1» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ն:

Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.04.2019թ. թիվ 6 որոշմամբ «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ն 1-7-րդ, 9-16-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է որպես ընտրված մասնակից:

«Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ -ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են հիմնավորող փաստաթղթերը:

«Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ի ստորագրման ներկայացրած պայմանագրի նախագծի 7.1 րդ կետի համաձայն՝ «Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը»:

Միևնույն ժամանակ ներկայացված պայմանագրի նախագծի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց՝ հավելված 1-ում, աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանված՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո քսանհինգ օրացուցային օրվա ընթացքում:

Սույն թվականի ապրիլի 30-ին /քանի որ պայմանագրի կնքված լինելու մասին Ընկերությունը որևէ տեղեկություն չուներ/ Ընկերության լիազորված անձն՝ Մուշեղ Տերյանը այցելել է ՀՀ պետական եկամուտների կոմիտե՝ տեղեկանալու համար գործընթացի վերաբերյալ և մտնելով համապատասխան բաժին տեղեկացել է, որ հնարավոր է պայմանագիրը կնքված է, իրենք հաստատ չգիտեն, ինչից ելնելով սույն թվականի մայիսի 1-ին Ընկերությունը էլեկտրոնային եղանակով հարցում էր արել Ֆինանսների նախարարությանը պայմանագրի իր օրինակը ստանալու համար, ինչպե նաև պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթվի մասին /որ օրվանից է հաշվարկվում 25 օրացուցային օրը/, ինչին ի պատասխան մայիսի 2-ին ստացել է էլեկտրոնային նամակ, որտեղից, որ տեղեկացել է պայմանագրի կնքված լինելու մասին: Այսինքն պայմանագրի կնքված լինելու մասին Ընկերությունը իմացել է մայիսի 2-ից: Նույն օրը Ընկերության ներկայցուցիչ Մուշեղ Տերյանը առաջարկել է նախարարության աշխատակիցներին տրամադրել նմուշներ, ինչին ի պատասխան նախարարության աշխատակիցները, պատճառաբանել են, որ չեն կարող տրամադրել նմուշները և առաջարկել նկարել հեռախոսով, ինչը կատարել է Ընկերության աշխատակիցը /նկարները կցվում են/: Ընկերությունը մի քանի օրվա ընթացքում ձեռնամուխ են եղել նկարված նմուշների դիզայնի պատրաստմանը և մի քանի անգամ ներկայացրել տպագրած նմուշների օրինակները՝ /ինչի հավաստման վերաբերյալ խնդրում ենք Ձեր միջնորդությունը ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից մեր ներկայացուցիչ Մուշեղ Տերյանի նախարարություն մուտք գործելու օրերի մասին գրանցամատյանից տեղեկատվության տրամադրելու համար/: Սույն թվականի մայիսի վերջին օրերին կամ հունիսի սկզբին Ընկերության ներկայացուցիչը վերջապես ստացավ նմուշներ մեկ օրով /ծրարների և բլանկի/, որից հետո մի 4-5 օրացուցային օրվա ընթացքում ամբողջ արտադրանքը հանձնված էր ՀՀ պետական եկամուտների կոմիտեի պահեստ /գրության պատճենը կցվում է/:

Սույն թվականի մայիսի 30-ին ՀՀ պետական եկամուտների կոմիտեն Ընկերությանը ուղղարկել էր գրություն կապված պայմանագրի կատարման ժամկետների հետ, նշելով, որ Նախարարությունը 5-օրյա ժամկետ է սահմանում ամբողջ ծավալի ապրանքները մատակարարելու համար, թեպետ կնքված «ՀՀՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-19/8-1» պայմանագրի 7.6

կետով սահմանվում է 30 օրացուցային օր երկարաձգման հնարավորություն /հաշվի առնելով որ մատակարարումը ձգձգվում է պատվիրատուի կողմից նմուշներ չտրամադրելու, դրանց տրամադրումը ձգձգելու, կատարողի կողմից ներկայացված նմուշների հաստատումը արհեստականորեն ձգձգելու հետևանքով/: Ընկերությունը ի պատասխան այդ գրությանը 04.06.2019թ. համ. ՀԱ 2019-2 գրությամբ խնդրել էր սահմանել ժամկետ 15 աշխատանքային օր, նմուշները տրամադրելուց հետո: Մեր գրությանը պատասխան չի տրվել, ինչը Ընկերությունը ընկալել էր իբրև համաձայնություն:

Սույն թվականի մայիսի 5-ին Ընկերությունը էլեկտրոնային փոստով ուղարկել է տոպրակների արդեն պատրաստված դիզայնի նմուշները, համապատասխան գրառումներով և ստանալով համաձայնեցում արդեն հունիսի 13-ին պատրաստել տպագրված նմուշ և ներկայացրել ՀՀ պետական եկամուտների կոմիտե, ինչին կոմիտեն պատասխանել է 29.06.2019թ. /16 օր անց/ գրությամբ, առաջարկելով եւ վերցնել նմուշները, որը մեզ է հասել 09.07.2019թ /փոստատարի միջոցով/: Այս կապակցությամբ նշեմ, որ տվյալ տոպրակները կարող էին պատրաստ լինել 7 աշխատանքային օրվա ընթացքում:

Նշեմ նաև, որ ՀՀ Պետ եկամուտների կոմիտեն մեր Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն պատակով պաշտոնական ընթացակարգը սկսել է ս/թ հունիսի 24-ին, մինչ այդ ըստ էության կարող էին արդեն պատրաստ և հանձնված լինեին տոպրակներն և մյուս ապրանքատեսականիի վերջնական նմուշները:

Հարգելի պարոն Օհանյան, տեղեկացնեմ նաև, որ ՀՀ ՊԵԿ պայմանագրի միակողմանի լուծման գործընթացը ըստ մեզ իականացրել է օրենքի կոպիտ խախտումով, այն է՝ կատարողին պատշաճ չի տեղեկացրել պայմանագրի միակողմանի լուծման մասին, այլ, այս գործընթացի մասին տեղեկացել ենք 04.07.2019թ. Ձեր՝ Լևոն Օհանյանի համապատասխան էլեկտրոնային գրությունից:

Նշեմ նաև, որ Ընկորության հետ կնքված պայմանագրի 1-7-րդ կետերի մասով մրցույթը չեր կայացել և եթե Ընկերությունը նպատակ չունենար կատարելու վերոգրյալ պատվերը, չեր մասնակցի բանակցություններին /ի դեպ բանակցությունների համաձայնվել է մասնակցել միայն մեր Ընկերությունը/ բանակցությունների գործընթացի ժամանակ չէր համաձայնի ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից առաջարկված գներին:»:

Ի լրումն «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված

պաշտոնական ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացրած դիրքորոշմանը՝ ներկայացված լրացմամբ Մասնակիցը հայտնել է, որ՝

*«Ինչպես արդեն նշել էինք՝ «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի համար հիմք է հանդիսացել ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի 14.06.2018թ. թիվ 10/14/57647-18 գրությունը, որով Կոմիտեն հայտնել է, որ մեջբերում եմ՝ «Համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև ՀՀ ՊԵԿ կարիքների համար տպագրական աշխատանքների կատարման համար 2019 թվականի ապրիլի 16-ին կնքված թիվ ՀՀՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-19/8-1 ծածկագրով «Պետության կարիքների համար տպագրական աշխատանքների կատարման» պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագրի) թիվ 1 հավելվածով նախատեսված ժամկետում և Պայմանագրի 1.1 կետով սահմանված՝ «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ն պարտավոր էր մինչև 2019 թվականի մայիսի 11-ը կատարեր ստանձնած պարտավորությունները, սակայն մինչև նշված ժամկետը չի կատարել, **որը խոչընդոտում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի բնականոն գործընթացը»:***

*Չնայած այն հանգամանքին, որ մատակարարման ժամկետի խախտումը Պատվիրատուի գործողությունների (անգործության, նմուշների տրամադրման, կամ հաստատման անհարկի ձգձգումների) հետևանք է, ՀՀ ՊԵԿ-ը միակողմանի լուծում է պայմանագիրը, որպեսզի **ժամանակային առումով չխոչընդոտվի ՀՀ պետական եկամուտների կոմիտեի բնականոն գործընթացը:***

*Մինչդեռ, ՀՀ ՊԵԿ-ը վերոնշյալ միակողմանի լուծված պայմանագրի չմատակարարված չափաբաժինների մասով (մեր կողմից ներկայացված նմուշները պայմանագրի լուծման փոխարեն եթե հաստատված լիներ, արդեն ողջ ծավալով մատակարարված կլիներ) 10.07.2019թ.-ին հայտարարում է մրցույթ, որի հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանված է 18.07.2019թ.-ը: Մրցույթի հրավերով վերոնշյալ տպագրական աշխատանքների մատակարարման վերջնաժամկետ է սահմանված պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 45 օրացուցային օր (մեր պայմանագրով սահմանված էր՝ 25): Այսինքն, ստացվում է, որ **ՀՀ ՊԵԿ-ը միակողմանի լուծում է պայմանագիրը ՀՀ պետական եկամուտների կոմիտեի բնականոն գործընթացը ժամանակային առումով չխոչընդոտվելու համար,** բայց պատրաստ է սպասել մոտ 75 օր՝ 25.09.2019թ.-ը:*

Ներկայացվում է օրերի հնարավոր հաշվարկը՝

*10.07.2019թ.-ը **նոր մրցույթի** հայտարարման ամսաթիվն է:*

18.07.2019թ.-ին՝ մրցույթի հայտերի բացման օրն է:

18.07.2019թ.-ից 22.07.2019թ.-ը՝ մրցույթի արդյունքների գնահատում, հաղթողի ճանաչում (2 աշխատանքային օր՝ 20 և 21-ը ոչ աշխատանքային են):

23.07.2019թ.-ից 28.07.2019թ.-ը օրենքով սահմանված անգործության ժամկետ (5 օրացուցային օր):

29.07.2019թ.-ից 31.07.2019թ.-ը պայմանագրի նախագծի ուղարկում հաղթող կազմակերպությանը:

01.08.2019թ.-ից 07.08.2019թ.-ը հաղթող կազմակերպության կողմից պայմանագրի կնքում (հրավերով նախատեսված է 10 աշխատանքային օրվա ընթացքում, մենք հաշվարկել ենք միջինը՝ 5 աշխատանքային օր):

08.08.2019թ.-ից 10.08.2019թ.-ը ՀՀ ՊԵԿ-ի կողմից պայմանագրի կնքում (2 աշխատանքային օրվա ընթացքում):

10.08.2019թ.-ից 25.09.2019թ.-ը հրավերով սահմանված մատակարարման վերջնաժամկետն է (45 օրացուցային օր):

*Այսպիսով ստացվում է, որ չնայած այն հանգամանքին, որ մատակարարման ժամկետի ուշացումը «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ կողմից անգործության հետևանք չէ, ՀՀ ՊԵԿ-ը միակողմանի լուծում է պայմանագիրը՝ **ՀՀ պետական եկամուտների կոմիտեի բնականոն գործընթացը ժամանակային առումով չխոչընդոտվելու համար,** սակայն պատրաստ է սպասել մոտ 75 օր մինչև՝ 25.09.2019թ.ը այն դեպքում, երբ Ընկերությունը 04.06.2019թ.-ին թիվ ՀՍ 2019-2 գրությամբ խնդրել էր մատակարարման ժամկետը երկարացնել 15 աշխատանքային օրով, այսինքն, մինչև՝ 25.06.2019թ.-ը:*

*Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ կողմից կատարվել է առավելագույնը (հիմնավորումների մի մասը, որը հնարավոր է եղել ներկայացնել ՊԵԿ-ի հետ գրագրության ձևով՝ կցված են, իսկ ՊԵԿ ֆիզիկապես գնալ-գալու պրոցեսը հնարավոր կլինի հիմնավորել եթե Ձեր կողմից հարցում կատարվի ՊԵԿ՝ անցագրային բաժնից Մուշեղ Տերյանի անունով բացված անցագրերի մուտքերի և ելքերի քաղվածքները պահանջելով) նման պայմաններում պատվերը ժամանակին հասցնելու համար, հաշվի առնելով նաև, որ ապացուցված է համարվում, որ ՊԵԿ-ի կողմից պայմանագիրը չի լուծվել ՀՀ **պետական եկամուտների կոմիտեի բնականոն գործընթացը ժամանակային առումով խոչընդոտվելու համար (նույն պատվերը, որի մասով ՊԵԿ-ի կողմից միակողմանի***

լուծվել է պայմանագիրը և 10.07.2019թ.- ին պայմանագրի լուծված չափաբաժինների մասով մրցույթ է հայտարարվել, կմատակարարվի մոտավոր 20.09.2019թ.-ից 25.09.2019թ.-ը, այսինքն՝ 70-75 օր հետո) *խնդրում եմ Ձեզ «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:»:*

Ելնելով վերոգրյալից, գտել են, որ «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ն թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, ուստի Բողոքներ քննող անձին խնդրել են «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ին չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

4. <u>ՍՑ-LO-2019/109 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) և «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ի միջև 16.04.2019թ.-ին կնքվել է թիվ «ՀՀՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-19/8-1» ծածկագրով «Պետության կարիքների համար տպագրական աշխատանքների կատարման» պետական գնման պայմանագրի (այսուհետ' Պայմանագիր):

Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 (քսանհինգ) օրացուցային օր՝ մինչև 11.05.2019թ.-ը (Պայմանագիրը ուժի մեջ է մտել այս ստորագրելու օրը՝ 16.04.2019թ.-ին, համաձայն՝ Պայմանագրի 7.1 կետի):

www.gnumner.am համացանցային կայքում 24.06.2019թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ի միջև 16.04.2019թ.-ին կնքված թիվ «ՀՀՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-19/8-1» ծածկագրով պայմանագիրը ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 11.06.2019թ.-ից միակողմանի մասնակի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.3 ենթակետի «ա» և «բ» պարբերությունների պահանջները:

Պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ Համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ի միջև ՀՀ ՊԵԿ կարիքների

համար տպագրական աշխատանքների կատարման համար 2019 թվականի ապրիլի 16-ին կնքված թիվ ՀՀՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-19/8-1 ծածկագրով «Պետության կարիքների համար տպագրական աշխատանքների կատարման» պետական գնման պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված ժամկետում և Պայմանագրի 1.1 կետով սահմանված՝ «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ -ն պարտավոր էր մինչև 2019 թվականի մայիսի 11-ը կատարեր ստանձնած պարտավորությունները, սակայն մինչև նշված ժամկետը չի կատարել հավելված 1-ով սահմանված աշխատանքները: «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ի կողմից սույն թվականի հունիսի 04-ին և հունիսի 05-ին մատակարարվել է 1-7-րդ չափաբաժինները: ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 2019 թվականի մայիսի 29-ի թիվ 1/18-1/24367-2019 գրությամբ նախազգուշացրել էր «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ին, որպեսզի Պայմանագրով նախատեսված պարտավորությունները կատարվեն, այլապես միակողմանի կլուծվի «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ի հետ կնքված Պայմանագիրը:

Պայմանագրով սահմանված ժամկետում վերը նշված աշխատանքները Ընկերության կողմից չեն կատարվել և խախտվել են Պայմանագրի էական պայմանները: Հետևաբար, Պայամանգրի 2.1.3 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն ստիպված է միակողմանի մասնակի լուծել Պայմանագիրը 1 359 500 ՀՀ դրամ չկատարված աշխատանքների մասով:

Հիմք ընդունելով՝ Պայմանագրի 2.1.3 ենթակետի «ա» և «բ» պարբերությունների պահանջները՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 2019 թվականի հունիսի 11-ից միակողմանի մասնակի լուծում է 2019 թվականի ապրիլի 16-ին կնքված ՀՀՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-19/8-1 ծածկագրով պայմանագիրը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 2019 թվականի մայիսի 29-ի թիվ 1/18-1/24367-2019 գրությամբ նախազգուշացրել է «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ին, որպեսզի Պայմանագրով նախատեսված պարտավորությունները կատարվեն, այլապես միակողմանի կլուծվի «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ի հետ կնքված Պայմանագիրը:

Ի պատասխան վերոնշյալ գրության Մասնակցի կողմից ներկայացվել են առարկություններ, հետևյալ բովանդակությամբ. *««Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ կողմից ՀՀՊԵԿ-ԳՀԱՇՁԸ-19/8-1 ծածկագրով պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների խախտումը կապված է մեր աշխատակցի և ՀՀ ՊԵԿ գնումների պատասխանատու ստորաբաժանման աշխատակիցների կողմից տպագրվելիք նյութերի նմուշների մշակման և դրանց հաստատման հետ. Ընկերությունը դրսևորել է ոչ թե անփույթ վերաբերմունք, այլ պատվերին մոտեցել է ամենայն պատասխանատվությամբ: Վերոգրյալ պատվերի այն անվանումները, որոնք շատ ցանկալի էր որ ՊԵԿ-ը ունենար թվային*

օրինակներ՝ չուներ, ինչը շատ է բարդացնում պատվերի կատարման ժամկետները կապված նմուշ-օրինակները հաստատելու /համաձայնացնելու/ հետ: Մեր աշխատակիցը ակտիվ աշխատում է համապատասխան ստորաբաժանման հետ, պարբերաբար ներկայացնելով նախընտրելի օրինակներ, իսկ նմուշները հաստատվելուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում ամբողջ տպաքանակը մատակարարվեց: Այն ապրանքատեսակները, որոնք տեքստային մաս քիչ են պարունակում՝ թղթյա տոպրակները, գրքույկները. այստեղ էլ փոփոխվել են գույները, ինչը կրկին բարդացնում է նմուշի ընտրման գործընթացը:

Հայտնում եմ. որ մինչև 03.06.2019թ-ին մատակարարվել է հետևյալ չափաբաժինները 1 (50000 ծրար). 2 (5000 ծրար). 3 (7000 ծրար), 4 (2000 ծրար) և 7 (անձնական թերթ 2050 հատ): Պայմանագրով նախատեսված մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված է երկու տիպի ապրանք տոպրակներ և բլոկնոտներ, որոնց տպագրման աշխատանքները կիրականացվի նմուշների տրամագրումից, հաստատումից հետո:

Խնդրում եմ Ձեր հանձնարարականը համապատասխան ստորաբաժանմանը տպագրվելիք նյութերի, գրքույկների և տոպրակների նմուշների տրամագրման. այնուհետև մեր կողմից ներկայացված նմուշների արագ քննարկման և հաստատման համար:

Ձեր կողմից վերոնշյալ գրությամբ սահմանված ողջամիտ ժամկետը խնդրում եմ սահմանել ՀՀ ՊԵԿ կողմից նմուշների տրամագրումից և դրանց հաստատումից հետո 15 աշխատանքային օր, քանի որ դեռ չունենք տպագրվելիք տոպրակների և գրքույկների նմուշները, որը առկա է ՀՀ ՊԵԿ համապատասխան ստորաբաժանումում (տպագրական աշխատանքներում անընդունելի է հեռախոսով նկարված նմուշներով առաջնորդվել և ստանալ որակյալ արտադրանք):»:

ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար Էդ. Գևորգյանին 06.06.2019թ.-ին ուղղված մեկ այլ՝ ՀՍ2019-3 գրությամբ, Մասնակիցը հայտնել է, որ քանի որ, ՊԵԿ-ի կողմից չի տրամադրվել տոպրակների և բլոկնոտների նմուշներ, «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ ներկայացնում է իր պատկերացմամբ պատրաստված տոպրակի և բլոկնոտի նմուշները՝ հաստատման համար:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների

նախարարության կողմից 02.07.2019թ. թիվ 26/26-1/11052-2019 գրությամբ «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: **Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:**

Օրենսգրքի 420-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 ի թիվ 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած Պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տպագրական աշխատանքների կատարման պարտավորությունը

(այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի 2.1.2 կետի համաձայն՝ եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք, պատվիրատուն իրավունք ունի

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե'

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել

մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ի միջև 16.04.2019թ.-ին կնքված թիվ «ՀՀՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-19/8-1» ծածկագրով «Պետության կարիքների համար տպագրական աշխատանքների կատարման» պետական գնման պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 (քսանհինգ) օրացուցային օր՝ մինչև 11.05.2019թ.-ը (Պայմանագիրը ուժի մեջ է մտել այս ստորագրելու օրը՝ 16.04.2019թ.-ին, համաձայն՝ Պայմանագրի 7.1 կետի):

www.gnumner.am համացանցային կայքում 24.06.2019թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ի միջև 16.04.2019թ.-ին կնքված թիվ «ՀՀՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-19/8-1» ծածկագրով պայմանագիրը ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 11.06.2019թ.-ից միակողմանի մասնակի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.3 ենթակետի «ա» և «բ» պարբերությունների պահանջները:

Պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ Համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ի միջև ՀՀ ՊԵԿ կարիքների համար տպագրական աշխատանքների կատարման համար 2019 թվականի ապրիլի 16-ին կնքված թիվ ՀՀՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-19/8-1 ծածկագրով «Պետության կարիքների համար տպագրական աշխատանքների կատարման» պետական գնման պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված ժամկետում և Պայմանագրի 1.1 կետով սահմանված՝ «Հարդ

ընդ Սոֆթ» ՍՊԸ-ն պարտավոր էր մինչև 2019 թվականի մայիսի 11-ը կատարեր ստանձնած պարտավորությունները, սակայն մինչև նշված ժամկետը չի կատարել հավելված 1-ով սահմանված աշխատանքները: «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ի կողմից սույն թվականի հունիսի 04-ին և հունիսի 05-ին մատակարարվել է 1-7-րդ չափաբաժինները: ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 2019 թվականի մայիսի 29-ի թիվ 1/18-1/24367-2019 գրությամբ նախազգուշացրել էր «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ին, որպեսզի Պայմանագրով նախատեսված պարտավորությունները կատարվեն, այլապես միակողմանի կլուծվի «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ի հետ կնքված Պայմանագիրը:

Պայմանագրով սահմանված ժամկետում վերը նշված աշխատանքները Ընկերության կողմից չեն կատարվել և խախտվել են Պայմանագրի էական պայմանները: Հետևաբար, Պայամանգրի 2.1.3 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն ստիպված է միակողմանի մասնակի լուծել Պայմանագիրը 1 359 500 ՀՀ դրամ չկատարված աշխատանքների մասով:

Հիմք ընդունելով՝ Պայմանագրի 2.1.3 ենթակետի «ա» և «բ» պարբերությունների պահանջները՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 2019 թվականի հունիսի 11-ից միակողմանի մասնակի լուծում է 2019 թվականի ապրիլի 16-ին կնքված ՀՀՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-19/8-1 ծածկագրով պայմանագիրը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 2019 թվականի մայիսի 29-ի թիվ 1/18-1/24367-2019 գրությամբ նախազգուշացրել է «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ին, որպեսզի Պայմանագրով նախատեսված պարտավորությունները կատարվեն, այլապես միակողմանի կլուծվի «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ի հետ կնքված Պայմանագիրը:

Ի պատասխան վերոնշյալ գրության Մասնակցի կողմից ներկայացվել են առարկություններ, որում մասնավորապես Մասնակիցը հայտնել է, որ Ընկերության աշխատակիցը ակտիվ աշխատում է ՊԵԿ համապատասխան ստորաբաժանման հետ, պարբերաբար ներկայացնելով նախընտրելի օրինակներ, իսկ նմուշները հաստատվելուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում ամբողջ տպաքանակը մատակարարվել է: Այն ապրանքատեսակները, որոնք տեքստային մաս քիչ են պարունակում՝ թղթյա տոպրակները, գրքույկները. այստեղ էլ փոփոխվել են գույները, ինչը կրկին բարդացնում է նմուշի ընտրման գործընթացը: Պայմանագրով նախատեսված մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված է երկու տիպի ապրանք տոպրակներ և բլոկնոտներ, որոնց տպագրման աշխատանքները կիրականացվի նմուշների տրամագրումից, հաստատումից հետո:

Վերոնշյալ գրությամբ խնդրել են ՊԵԿ գլխավոր քարտուղարի հանձնարարականը համապատասխան ստորաբաժանմանը՝ տպագրվելիք նյութերի, գրքույկների և տոպրակների նմուշների տրամադրման. այնուհետև Ընկերության կողմից ներկայացված նմուշների արագ քննարկման և հաստատման համար:

ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար Էդ. Գևորգյանին 06.06.2019թ.-ին ուղղված մեկ այլ՝ ՀՍ2019-3 գրությամբ, Մասնակիցը հայտնել է, որ քանի որ, ՊԵԿ-ի կողմից չի տրամադրվել տոպրակների և բլոկնոտների նմուշներ, «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ ներկայացնում է իր պատկերացմամբ պատրաստված տոպրակի և բլոկնոտի նմուշները՝ հաստատման համար:

Նման պայմաններում, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ի կողմից ձեռնարկվել են հնարավոր բոլոր գործողություններն՝ ուղղված պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարմանը, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված, հնարավոր չի եղել դրանք հասցնել տրամաբանական ավարտին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորության անպատշաճ կատարելը տեղի է ունեցել Պայմանագրի առարկան հանդիսացող աշխատանքների ՀՀ ՊԵԿ կողմից չհաստատվելու պատճառով: Նման պայմաններում պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու ընթացակարգը մերժելու միջոցով:

Ուստի նման պայմաններում, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.07.2019թ. թիվ 26/26-1/11052-2019 գրությամբ «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**